

22

ՍԵՊՏԵՄԲԵՐ
2025

Luys Lnyu®



ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ԱՋԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ
ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՃԱՊՈՆԱԿԱՆ ՓՈՐՁԻ
ԿԻՐԱՌԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՃԱՊՈՆԱԿԱՆ ՓՈՐՁԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ



Անցյալի իմացության, պատմության իմաստավորման, ամենատարբեր անբարենպաստ իրավիճակներում հայտնված երկրների ու ժողովուրդների փորձի ուսումնասիրությունը մեծ հետաքրքրություն է ներկայացրել բոլոր ժամանակներում: Շատ ժողովուրդների ու երկրների կյանքում այն առանձնահատուկ նշանակություն է ստանում հատկապես շրջադարձային ու ճգնաժամային պատմափուլերում. հայտնվելով ամբողջովին նոր ու անցյալից տարբեր իրողություններին, մարտահրավերներին ու ճգնաժամերին դեմ հանդիման՝ ժողովուրդները, նրանց մտավոր ու քաղաքական ընտրախավերը գոյություն ունեցող խնդիրների առաջացման արմատներն ու հաղթահարման բանալիները փորձել են գտնել նաև իրենց կամ այլ ժողովուրդների պատմական փորձի յուրացման, իմաստավորման ու նորովի մեկնաբանության մեջ:

Ահավասիկ, Երկրորդ համաշխարհային պատերազմում դաշնակիցներից կրած դաժան պարտությունն ու կապիտուլյացիան պատմական աննախադեպ իրադարձություն էր ճապոնացիների կյանքում: Այն Ճապոնիայի հազարամյակների պատմության համատեքստում իսկապես բացառիկ իրադարձություն էր. առաջին անգամ Ճապոնիան ենթարկվում էր արտաքին նվաճման: Ճապոնական երկու քաղաքների ատոմային ռմբակոծությունն իր հերթին ճապոնացիների գիտակցության մեջ դարձավ անմոռանալի ու խորհրդանշական կնիք՝ դաջելով այդ պարտության ու ծախողման աննախադեպությունն ու մասշտաբայնությունը: Ավելորդ է ասել, որ պատմական

այդ իրադարձություններն այնպիսի խոր հետք թողեցին ճապոնացիների հավաքական մտածողության ու ինքնության վրա, որ ճապոնացիների ազգային ինքնությունը հայտնվեց բացառիկ ու խոր ճգնաժամի մեջ. երեկվա ճապոնացիները սկսեցին չճանաչել ու չհասկանալ իրենք իրենց ու օրվա ճապոնացիներին:

Ոգևորված նախորդիվ ունեցած ռազմական ձեռքբերումներով ու տարածաշրջանային առաջնորդի անքննելի դերով՝ ճապոնացիները Երկրորդ համաշխարհային պատերազմն ավարտեցին ճիշտ հակառակ արդյունքով՝ անվերապահ կապիտուլյացիայով, ինչն էական ազդեցություն թողեց ոչ միայն ճապոնացիների՝ Երկրորդ աշխարհամարտի իմաստավորման ու հիշողության բյուրեղացման հարթություններում, այլև հանգեցրեց նրանց էթնիկ ինքնության նշանակալի փոխակերպմանը: Այն ինքնության ճգնաժամ էր. ազգային ինքնության հեղափոխական փոխակերպումները հենց ինքնության ճգնաժամեր են:

Արդի ազգաբանության ու մշակութային մարդաբանության դիտակետից՝ գերարժեքության բարդույթը, որ բնորոշ էր ճապոնացիներին մինչև պարտությունը, քայլ առ քայլ փոխակերպվեց թերարժեքության ախտանիշի, որն իր հերթին պիտի փոխակերպման ենթարկվեր այդ երկրի սոցիալ-տնտեսական վերելքին զուգահեռ: Սա հեղափոխական վայրիվերում էր: Ճապոնացիների հավաքական գիտակցությունը, իրեն հայտնաբերելով միանգամայն այլ պատմաքաղաքական իրավիճակում, սկսեց քայլ առ քայլ համակերպվել նոր իրողություններին՝ ենթարկվելով բարդ, հակասական, բայց և ճակատագրական ու որոշիչ փոխակերպումների: Ճապոնացիների էթնիկ ինքնությունը հետպատերազմյան իրականությունում հայտնվեց խոր ճգնաժամում:

Պատերազմական աղետին ու հետպատերազմյան ճգնաժամին հաջորդելու էր «ճապոնական հրաշքը»՝ Ճապոնիայի տնտեսական բացառիկ վերելքն ու քաղաքական համակարգի սահուն փոխակերպումը դասական միապետությունից դեպի ժամանակակից ժողովրդավարություն: Պատմական այս բացառիկ ընթացքը

նշանավորվեց ճապոնացիների հավաքական գիտակցության մեջ տեղի ունեցած նշանակալի փոխակերպումներով: «Ճապոնական հրաշքն» իր հերթին մեծապես ազդելու էր այդ ժողովրդի ինքնության փոխակերպումների վրա:

Ինքնության ճգնաժամի հաղթահարման ճապոնական փորձի իմաստավորմանն ու ընդօրինակմանը դիմել են ճգնաժամում ու շրջադարձային իրավիճակներում հայտնված շատ ու շատ երկրներ, նրանց քաղաքական ու գիտական էլիտաներ՝ հետխորհրդային Ռուսաստանից մինչև արևելաասիական ու լատինաամերիկյան երկրներ՝ փորձելով գտնել այն ուսանելին ու կիրառելին, որը թույլ կտա այդ ժողովուրդներին բարեհաջող հաղթահարել սեփական ինքնության ճգնաժամը:

Արցախյան վերջին պատերազմում կրած պարտությունը, Արցախի վերջնական կորուստն ու հայաթափումը, Հայաստանի շարունակական նվաղումն ու զանգվածային հիասթափությունն ակնհայտորեն հանգեցրել են ինքնության ճգնաժամի: Հայ ժողովուրդն այսօր ապրում է պատմության մեջ իր ինքնության ամենամեծ ճգնաժամերից մեկը: Սա նշանակում է, որ մեր ժողովրդի հավաքական ընկալումները, արժեքները, հիշողությունը և ինքնության այլ առանցքային շերտերը ենթարկվում են էական փոխակերպումների՝ երբեմն առաջ բերելով ժամանակակիցներիս զարմանքն ու չհասկացվածությունը: Այս ամենի խտացված արտահայտությունն է մեզանում տարածված հարցադրումը՝ անհասկանալի է, թե ինչ է կատարվում մեր ժողովրդի հետ այսօր՝ այն դարձել է անճանաչելի: Ճիշտ նման հարցադրումներ էին հնչում նաև հետպատերազմյան Ճապոնիայում:

Որքան էլ ոչ մասնագիտական շրջանակների համար զարմանալի թվա, պատմաաշխարհագրական, մշակութային և այլ կարևոր գործոններով պայմանավորված՝ հայ ու ճապոնացի ժողովուրդներն ունեն ինքնության կառուցվածքի ընդգծված առանձնահատկություններ: Համադրելի են նաև ինքնության ճգնաժամերի խորությունը, դրան հանգեցրած պատճառներից մի քանիսն ու ճգնաժամի ընդհանուր կառուցվածքը: Ըստ այդմ, ճապոնացիների ազգային ինքնության ճգնաժամի հաղթահարման փորձը կարող է բարձրարժեք ու

ուսանելի հետևություններ պարունակել հայ ժողովրդի ինքնության այսօրվա ճակատագրական ճգնաժամը հաղթահարելու գործում: Հատկապես, երբ խոսքը վերաբերում է ինքնության անխուսափելի փոխակերպումները ինքնահոսի թողնելուն կամ այն սանձելուն, նախընտրելի ուղղությամբ ուղղորդելուն ու հնարավոր բյուրեղացմանը:

Ըստ այդմ, առանձնահատուկ նշանակություն է ստանում հետպատերազմյան ճապոնացիների էթնիկ ինքնության ճգնաժամի կառուցվածքում հատկապես այն բաղադրիչների վերհանումը, որոնք այս կամ այն կերպ համադրելի են հայաստանյան ներկայիս իրողությունների հետ:

Հետազոտությունից բխող մի քանի նման ընդհանրացումներ՝ համառոտակի.

ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ VS ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Ճապոնական միլիտարիզմի համատեքստում լայն տարածում ստացավ «արևելասիական բարգավաճ տարածքի» գաղափարախոսությունը. օգտագործվում էր զուտ գաղութատիրության ծավալման համար և չէր նպաստում ճապոնացիների էթնիկ ինքնության մեջ ռեգիոնալիզմի գիտակցության ուժեղացմանը: Ճապոնիան ճապոնացիների հավաքական ընկալումներում շարունակում էր ընկալվել իբրև իր բոլոր հարևաններից տարբերվող և բարձր առաքելություն ունեցող մի պետություն: Պատերազմում կրած դաժան պարտությունից հետո ինքնության այս բաղադրիչը՝ տարածաշրջանային շերտը կամ աշխարհագրական հարևանության ընկալումը, ճապոնացիների մոտ ենթարկվեց էական փոխակերպման՝ պարարտ հող դառնալով արդեն արևելասիական տարածաշրջանային զուտ տնտեսական ինտեգրացիայի՝ հետզհետե ուժգնացող օրակարգի համար: Պարտությունը ճապոնացիների ընկալումներում ջարդեց տարածաշրջանային առաքելություն ունեցող և առաջնորդ պետություն լինելու նախապատերազմյան ընկալումները: Էական փոխակերպման ենթարկվեց ճապոնացիների ինքնության տարածաշրջանային շերտը: Պարտությունից հետո աշխարհագրական հարևանության և տարածաշրջանային

ինտեգրացիայի անհրաժեշտությունը ճապոնացիների ընկալումներում արդեն բխեցվում էր ոչ թե արտաքին սպառնալիքից կամ միլիտարիզմի ու նվաճողականության թելադրանքից, այլ պայմանավորվում էր տարածաշրջանի ներքին ընդհանուր տնտեսական շահերով և հավաքական անվտանգության խնդիրներով՝ որպես անցյալում տեղ գտած թշնամության ու պատերազմների կրկնությունը բացառելու կանխարգելիչ հանգամանք: Տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիա և ներգրավվածություն, այդ թվում և այն պետությունների հետ, որոնց դեմ դեռ երեկ պատերազմում էր Ճապոնիան՝ Կորեա, Ֆիլիպիններ, Թայվան և այլն:

Բերված համատեքստում, թերևս, հետաքրքրական է անդրադառնալ Երկրորդ աշխարհամարտից հետո ճապոնացիների հավաքական գիտակցության մեջ ասիական տարածաշրջանի որպես առավել ընդարձակ քաղաքակրթական միավորի ընկալման նկատելի փոխակերպումներին, որոնք հետագայում իրենց յուրօրինակ արտացոլումն են գտել նաև լեզվաբանության մեջ: Նախապատերազմյան Ճապոնիայում Ասիա տեղանունը գրվում էր կանջիով՝ ճապոներենի հիմնական գրային համակարգերից մեկով, որն իրենից ներկայացնում է չինարենից ժամանակի ընթացքում փոխառված գաղափարագրեր, մինչդեռ հետպատերազմյան զարգացումներին զուգընթաց, պայմանավորված ոչ այնքան և ոչ զուտ լեզվաբանական բարեփոխումներով, այն սկսեց գրվել կատականայով՝ երկինջունային այբբենական համակարգով, որը ճապոներենում օգտագործվում է օտար և փոխառյալ բառերը գրելու համար: Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած զարգացումների արդյունքում ճապոնացիների էթնիկ ինքնության մեջ ասիական շերտը որոշակի նահանջ ապրեց. 1980-ական թվականներին, երբ ճապոնական տնտեսությունն իր զարգացման բարձրակետին էր հասել, Տոկիոյի առաջադեմ մտավորականության շրջանում մեծ տարածում ուներ Յուրումի Յոշիյուկիի «Աձիա ուա նաձե մաձուշիկա» («Ինչու՞ է Ասիան աղքատ») աշխատությունը: Յոշիյուկիի և իր համախոհների

համար Ասիան չէր ներառում Ճապոնիան, իսկ ճապոնացիների էթնիկ գիտակցությունը ժամանակի մեջ բացառեց ինքնանույնացումը Ասիայի հետ:

Համանման խորքային տեղաշարժեր այսօր տեղի են ունենում նաև մեր հավաքական ինքնությունում: Աշխարհագրական հարևանության և այդ միջավայրում մեր տեղի ու դերի ընկալումներն այսօր նկատելի փոխակերպումների են ենթարկվում: Պատերազմի ու պարտության, լայնածավալ քարոզչության ու «խաղաղության օրակարգի», նաև արտաքին ճակատում զարգացումների թելադրանքով մեր ինքնության մեջ սկսել են կասկածի տակ առնվել մեր ինքնության այդ շերտի ռացիոնալությունը, թե ինչպիսին էր մեր հավաքական ընկալումներում մեր աշխարհագրական հարևանությունը, որն էր մեր տեղն ու դերն այդ միջավայրում ու որն էր մեր առաքելությունը: Անշուշտ, պատերազմում կրած դաժան պարտությունը, ինչպես Երկրորդ համաշխարհայինում ճապոնացիների պարագայում էր, այն մայր զարկերակն է, որը սնուցում է նման փոխակերպումները: Ճապոնացիների պարագայում, հաջորդ տասնամյակների տնտեսական հրաշքն ու համաշխարհային երկրորդ տնտեսություն դառնալը, ինքնության այդ փոխակերպումները կրկին նրանց վերադարձրին նախկին ինքնավստահությունն ու տարածաշրջանային առաջնորդ լինելու զգացումները: Առանց, իհարկե, ընդգծված միլիտարիզմի և նվաճողականության իներցիայի: Ինչպիսի ընթացք կունենա մեր ժողովրդի ինքնության այս շերտի հետագա փոխակերպումները, աժանցյալ են լինելու այն բանից, թե ինչպիսի հաջողություններ կունենա Հայաստանը գալիք տասնամյակներում: Այն կարող է բյուրեղանալ և՛ որպես աշխարհագրական մեր միջավայրում մեր տեղի ու դերի ռացիոնալ ու շահավետ ընկալումներով, և՛ խորացող թերարժեքության համախտանիշի թելադրանքով նպաստել թերարժեքության բարդույթի ձևավորմանը՝ իսպառ խեղելով աշխարհագրական միջավայրի ռացիոնալ ընկալումները: Ինչպե՞ս կընթանա մեր ինքնության այս տրանսֆորմացիան, առնչություն ունի՞ իրավիճակի ճիշտ ախտորոշումից ու այն քայլերից, որոնք

կծեռնարկվեն անխուսափելի այս գործընթացը կառավարելու կամ այն վտանգավոր ինքնահոսի թողնելու ընտրությունից:

ՄԵՆՔ VS ՆՐԱՆՔ

Պատմական զարգացումների վրա ունեցած ազդեցության տեսանկյունից էթնիկ ինքնությունն առավելագույն նշանակություն է ձեռք բերում այն ժամանակ, երբ մշակութային արմատական տեղաշարժեր ապրող հասարակություններում փոխվում են համաշխարհային տեղեկատվական հոսքերին տվյալ հանրության ունեցած մատչելիության աստիճանը, այդ հոսքերի կոնտենտը, երբ հանրային կյանքն ավելի շատ բնութագրվում է անորոշությամբ, անհանգստությամբ, հավաքական որակների դանդաղ, բայց տեսանելի փոխակերպումներով, նոր իրավիճակին հանրության ադապտացմամբ: Այդպիսի իրավիճակում էր հայտնվել Ճապոնիան խաղաղօվկիանոսյան պատերազմից հետո, երբ վերջնականապես ու ամբողջությամբ բացվեց աշխարհի համար: Որոշակիորեն նման իրավիճակում է հայտնվել Հայաստանն այսօր՝ առաջին հերթին տեղեկատվական հեղափոխությամբ, բայց նաև հայտնի զարգացումներով թելադրված:

Ինչպես շատ այլ ժողովուրդների պարագայում, նախապատերազմյան ճապոնացիների դեպքում ևս էթնիկ ինքնաճանաչումը՝ ով ենք մենք, և էթնիկ ինքնության գիտակցությունը ներկայանում էր որպես մի գործընթաց, երբ «նրանց» էթնիկ և մշակութային տարբերությունների գիտակցումը ծառայում է «մեր» առանձնահատկությունները և տարբերությունները բացահայտելուն: Էթնիկ ինքնաճանաչման այդ շղթան, որ առանձնապես ուժգնացել էր դեռևս 19-րդ դ. կեսերից արտաքին աշխարհի առաջ Ճապոնիայի բացվելուց ի վեր, հատկապես նվաճողականությամբ թելադրված, հանգում էր «ճանաչիր ուրիշին, որ ճանաչես ինքդ քեզ» բնութագրական բանաձևում: Երկրորդ աշխարհամարտում կրած պարտությունից հետո ճապոնացիների էթնիկ գիտակցության այդ բանաձևում տեղի ունեցավ նշանակալի բեկում. ավելի շատ «ուրիշների» առանձնահատկությունների բացահայտումը սկսեց ածանցվել «մեր»

ինքնաճանաչումից»: Տեղի ունեցած մեծ աղետի ազդեցությամբ ճապոնացիներին սկսել էր ավելի շատ հետաքրքրել սեփական ինքնաճանաչումը՝ պատասխանել հարցին, թե ով ենք մենք: Նաև հասկանալու համար այն պատճառները, որոնք հանգեցրին ճապոնական միլիտարիզմի ծավալմանն ու նման ազգային աղետի: Այն ստացավ նաև «մեղքի մշակույթ» հատկանշական անվանումը, երբ հանրային զանգվածային տրամադրությունները ճապոնացի ժողովրդի մեջ առաջ բերեցին մեղքի մեծ զգացում՝ պատերազմի ընթացքում այլոց պատճառած վշտի ու զոհողությունների համար:

Սեփական ինքնաճանաչման այս տևական գործընթացը ճապոնացիների մոտ շարունակվեց մի քանի տասնամյակ: Եթե հետպատերազմյան առաջին երկու տասնամյակներում այդ գործընթացը սնուցող հիմնական աղբյուրը Ճապոնիայի դաժան կապիտուլյացիան էր, ապա դրան հաջորդած տասնամյակներում՝ արդեն Ճապոնիայի արձանագրած սոցիալ-տնտեսական թռիչքն ու ճապոնական հրաշքը: «Մենք»-ի գիտակցությունը չէր հիմնվում «նրանք»-ի առանձնահատկությունների և տարբերությունների ճանաչման վրա: Ընդհակառակը՝ սեփական ինքնաճանաչումից ու ինքնաբացահայտումից էր ածանցվում «նրանց» տարբերությունների ընկալումը և գիտակցումը:

Սեփական ինքնաճանաչման այս զանգվածային փնտրտուքները 1960-ականների վերջին և 1970-ականների սկզբին, արդեն Ճապոնիայի տնտեսական անշեղ զարգացմանը զուգահեռ, առաջ բերեցին փոխշաղկապված երկու երևույթներ, որոնք ստացան առաջին հայացքից բավական ինքնատիպ, սակայն ոչ միանշանակ ձևակերպումներ՝ Նիհոնձինոոն և Նիհոնբունկաոոն՝ ճապոնականության տեսությունը և ճապոնական մշակույթի տեսությունը: Առաջինը գերազանցապես վերաբերում էր ճապոնացիների էթնիկ ինքնության և առանձնահատկությունների ուսումնասիրությանը, վերհանմանն ու ինքնաճանաչմանը, իսկ երկրորդը՝ ճապոնական մշակույթի բացառիկությանը, նրա առանձնահատուկ գծերի քննությանն ու մշակութային կերպի բացահայտմանը: Այս տեսությունները, որ անվանվում էին ազգային

ինտրոսպեկցիայի, ճապոնականության, ազգային ինքնության որոնումների և ինքնավերլուծության բում, դարձան հետպատերազմյան շրջանի գիտական և հանրային քննարկումների մի սովորաձավալ առանցք, էլ ավելի ծավալվեցին Ճապոնիայի հետպատերազմյան տնտեսական ու քաղաքական արդիականացմանը զուգընթաց: Ճապոնական կառավարության կողմից անգամ ստեղծվեց և ֆինանսավորվեց Մաթեմատիկական վիճակագրության ինստիտուտին կից «Ազգային բնավորության կոմիտեն», որն ուսումնասիրություններ էր կատարում ճապոնացիների էթնիկ հոգեկերտվածքի մեջ նկատվող փոփոխությունների վերաբերյալ՝ ուղղորդելու էթնիկ ինքնության տրանսֆորմացիան:

Նախ՝ պատերազմում կրած դաժան պարտության, ապա տնտեսական թոփառված զարգացմանը զուգահեռ, ճապոնականության անվերջ պրպտումները հետևանք էր այն բանի, որ ճապոնացիներն իրենց հայտնաբերեցին որակապես մի նոր իրավիճակում, երբ հասարակությունն իրենց աչքի առաջ ենթարկվում էր գլոբալ փոփոխությունների, իսկ վերջինս, իր հերթին, օրինաչափ անհանգստություն էր առաջացնում ճապոնացիների հավաքական գիտակցության մեջ՝ ծնունդ տալով սեփական տեսակի իրական ինքնաճանաչմանը, իսկ հետագայում նաև՝ սեփական պատմության վերարժևորման մղումներին: Սոցիալ-տնտեսական, ներքաղաքական և աշխարհաքաղաքական փոփոխությունները, մշակութային-ինֆորմացիոն նոր միջավայրը պատերազմին հաջորդած շրջանում ստեղծում էին որակապես նոր իրավիճակ և ճապոնացիների հավաքական ինքնությունն այս կամ այն կերպ անպայման արձագանքելու էր դրանց: Այն, որ տարբեր ժողովուրդների պարագայում էթնիկ ինքնագիտակցությունն առավել սուր է արտահայտվում և դրսևորվում հասարակական խոր փոփոխությունների պայմաններում, ապացուցվում է նաև կայսրությունների փլուզման կամ էթնիկ սահմանների վերաձևման ընթացքում, երբ արմատական այլ փոփոխություններին զուգահեռ, արձանագրվում է ուժեղ արտահայտված էթնիկ կոնսոլիդացիա, երբ էթնիկ պատկանելությունը հանդես է գալիս որպես հավաքական

կոնսոլիդացիային նպաստող հիմնական ուժ կամ գործոն, ինչը համախմբում է տարբեր տարիքի ու սեռի, տարբեր գաղափարներ կրող մարդկանց:

2020թ. պարտությունից ի վեր նույն երևույթը խորանում է նաև մեզանում: Պատերազմում կրած պարտությունն ու ածանցյալ աղետը մեր հանրային միտքն ուղղել է նորովի ինքնաճանաչման: Ամբողջովին նույնական: Որպես բնական ռեակցիա տեղի ունեցած աննախադեպ կորուստներին՝ ինքնաճանաչման եղանակով հասկանալու այն պատճառները, որոնք հանգեցրեցին մեր պարտությանն ու ազգային նվաստացմանը: Այս երևույթը դրսևորվում է հայաստանյան հանրային-քաղաքական և ինտելեկտուալ դիսկուրսում չդադարող հարցադրումներով, երբեմն խիստ քաղաքականացված՝ մենք էինք մեղավոր, որ այսպես եղավ, մենք սխալվեցինք պատմության այս կամ այն հանգույցում, մենք բավարար չափով հայրենասեր չէինք, մենք բավարար չափով իրապաշտ չէինք, մենք չկռվեցինք այնպես, ինչպես պետք էր, մենք դասալիքներ ունեինք, մենք բոլորս ենք մեղավոր տեղի ունեցածում, մենք պիտի կրթվենք, որ այլևս տեղի չունենա նույնը և այլն:

Նման բոլոր հարցադրումները, ինչպես ճապոնացիների պարագայում էր, դաժան պարտությամբ թելադրված նորովի էթնիկ ինքնաճանաչման դրսևորումներ են: Եթե ճապոնացիների պարագայում, հետպատերազմյան տնտեսական հրաշքով ու հաջողություններով թելադրված, էթնիկ ինքնաճանաչման նման զանգվածային փորձերը կանխեցին սաղմնավորված թերարժեքության ախտանիշի՝ բարդույթի վերածմանը, մեծ հարց է, թե ինչպես կընթանա հայ ժողովրդի էթնիկ ինքնության ընթացիկ տրանսֆորմացիան: Այն կամ կհանգեցնի թերարժեքության ախտանիշի խորացմանն ու բարդույթի վերածմանը, կամ կնպաստի առավել ռացիոնալ էթնիկ ինքնաճանաչմանն ու նոր իրողություններին մեր հավաքական հոգեկերտվածքի ու օրակարգի ռացիոնալ հարմարեցմանը:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ VS ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

Պատմական անցյալի իմաստավորումն ու մեկնաբանումը, դրա ակցենտավորումը պայմանավորված է ամենատարբեր հանգամանքներով: Այդ հանգամանքներով թելադրված՝ պատմությունը, հատկապես արդի քաղաքական պատմությունն ու պատմագիտությունը, շատ հաճախ վերածվում են պահի պետական, ազգային կամ իշխող էլիտայի քաղաքական շահերը սպասարկող և ժամանակի զգացմունքայնությամբ շաղախված գիտության անկայուն մի ճյուղի: Այս առումով, 20-րդ դարի վերջը և 21-րդ դարի սկիզբն ամենևին էլ չառանձնացան ժողովուրդների առօրյա կյանքում պատմության ու պատմական անցյալի դերի նվազմամբ, ինչպես կանխատեսվում էր շատ հետազոտողների կողմից՝ հղում կատարելով ինտեգրացիոն գործընթացներին, հիշողության զանգվածային ֆրագմենտացիային ու տրանսֆորմացիային:

Ընդհակառակը, տարբեր երկրների ու ժողովուրդների պարագայում, տարբեր գործոններով պայմանավորված, շարունակվեցին պատմության վերանայման, վերագնահատման և վերաիմաստավորման փորձերը: Պատմական անցյալի համընդհանուր վերանայման ու վերաթևորման հետզհետե ուժեղացող այս հոսանքը շեշտը դնում է պատմական անցյալի հիմնականում այն խնդիրների վրա, որոնք կարևոր նշանակություն ունեն ավելի հասկանալի և ընդունելի դարձնելու ներկան՝ ինչպես անհատական, այնպես էլ խմբային մակարդակներում: Որպես մեկնակետ հանդես է գալիս ոչ թե փաստացի անցյալը, այլ պատմության այսպես կոչված ֆենոմենոլոգիական ընկալումը, երբ անցյալը սկսվում է այնտեղից, որտեղից տվյալ պահին սկիզբ է առնում հավաքական հիշողությունը:

Ընթացիկ իրադարձությունների թելադրմամբ պատմության վերանայման ֆենոմենը ուղղակի դասագրքային էր հետպատերազմյան Ճապոնիայի պարագայում: Միայն հանրային-քաղաքական այն մեծ աղմուկն ու քննարկումները, որ ամեն անգամ ծավալվում էին Ճապոնիայում պատմության դասագրքերի շուրջ, դրա ամենամեծ հիմնավորումն է: Եթե հետպատերազմյան առաջին փուլում պատմության վերանայման շարժիչ ուժը պատերազմում կրած

դաժան պարտությունն էր, քաղաքական իրողությունների ոտքից գլուխ շուռ գալը և էթնիկ ինքնաճանաչման բնական մղումը, ապա հետագա տասնամյակներում նույն ֆենոմենը ոռոգողի դերում արդեն Ճապոնիայի աննախադեպ արդիականացումն էր, այն էթնոմշակութային կամ պատմական պատճառականությամբ պայմանավորելու մղումը, ինչպես նաև աշխարհագրական հարևանությամբ տեղի ունեցող փոփոխությունները՝ Չինաստանի, Հարավային Կորեայի և ասիական այլ տնտեսությունների աճն ու այդ երկրների հետ պատմական անցյալի շուրջ բացվող մեծ բանավեճը՝ հիշողությունների յուրատեսակ հակամարտությունը: Պիտի նկատել, որ Ճապոնիայի սահմաններից դուրս ևս մեծ թափ ստացավ Ճապոնիայի պատմության ընդհանուր վերանայումն ու վերարժևորումը, որը թելադրված էր արդեն միջազգային կյանքում Ճապոնիայի նվաճած նոր հորիզոններով:

Գաղտնիք չէ, որ պատմական տարբեր անցքերն ու երևույթներն ունեն կարևորագույն նշանակություն էթնիկ ինքնության տարբեր տարրերի փոխակերպման վրա ազդեցություն ունենալու տեսանկյունից: Հոգեբանական գրականության մեջ հիմնավորված է պնդումը, որ հոգեկան ողբերգություն ապրած անհատը այդ վիճակից դուրս գալու ելքը հաճախ տեսնում է իր ապրած անցյալի վերարժևորման և այնտեղից նոր մեկնակետ հայտնաբերելու ու իր ներկան այդ մեկնակետի տրամաբանությամբ գիտակցելու մեջ: Նույն կերպ, տարբեր ժողովուրդների մոտ հատկապես անցումային, մեծ փոփոխությունների և խառնակ ժամանակաշրջաններն ուղեկցվում են պատմական անցյալի վերանայմամբ, վերարժևորմամբ, նորովի իմաստավորմամբ, ցանկալի ապագայի տեսլականը անցյալից սնող կենարար արմատների որոնմամբ: Հետպատերազմյան Ճապոնիայում դա այդպես էր: Այդպես է նաև մերօրյա Հայաստանում, երբ պատմությունը, նրա առանձին անցքերն ու հերոսները, առավել քան երբևէ, դարձել են օրվա ու ապագային միտված բանավեճի առանցքային օրակարգերից մեկը:

Տեղեկատվական հեղափոխությամբ թելադրված՝ պատմության շարադրման, վերանայման ու ակցենտավորման, մեր հավաքական հիշողության մեջ անցյալի բյուրեղացման գործում այսօր մեծ է լրատվամիջոցների դերակատարությունը: Սոցիալական ցանցերը, համացանցը, թերթերը, ամսագրերը, ֆիլմերը, լայն սպառում ունեցող գեղարվեստական գրականությունը, երգիծական շարժանկարները, զանգվածային մշակույթի այլ տարրերն ավելի մեծ նշանակություն են ստացել հայ ժողովրդի հիշողության տրանսֆորմացիայի և պատմության մեկնաբանության գործում, քան մասնագիտական գրականությունն ու դասագրքերը: Այդ առումով կարելի է պնդել, որ մեզանում պատմությունը և անցյալը դառնում է ոչ միայն ու ոչ այնքան պատմագրության, այլև զանգվածային կամ պոպուլյար մշակույթի մենաշնորհը:

Պատմական անցյալի շուրջ բանավեճի ճապոնական հետպատերազմյան օրինակը վկայում է, որ տարբեր խմբերի կողմից պատմությունն օգտագործվում է տարբեր նպատակներով՝ ներկան արժևորելու, ապագայի քաղաքական տեսլականը հիմնավորելու, էթնիկ ինքնության տարբեր բաղադրիչները կարծրացնելու կամ սրելու, առանձին խնդիրների շուրջ ազգային միասնություն ապահովելու կամ այլ նպատակների համար: Ճապոնիայի օրինակը վկայում է՝ պատմությունն իր վրա կրում է ոչ միայն անցյալի, այլև ներկայի հետքերը: Հատկապես, երբ պետությունն ու ժողովուրդը հայտնվում են հեղափոխական տրանսֆորմացիայի ցիկլում:

Ճապոնական հասարակությունում պատմության գնահատման և վերանայման հոսանքներն առավելապես ինտենսիվացան 20-րդ դարի վերջին քառորդում՝ կախված ինչպես ներհասարակական, այնպես էլ միջազգային ու տարածաշրջանային տնտեսական, քաղաքական և մշակութային տարբեր գործոններից: Պատմության վերագնահատման, վերաիմաստավորման ու վերանայման զանգվածային մշակույթի բնորոշ մի քանի դրսևորումներ ուղղակի դասագրքային են՝ 1998թ. սկզբին ամերիկաբնակ չինացի Իրիս Չանգի հրատարակած «Նանկինի բռնաբարությունը» գիրքը, 1998թ. մայիսին

ճապոնական կինոթատրոնների էկրաններ բարձրացած «Հպարտություն. ճակատագրական պահը» ֆիլմը, որը նվիրված էր Տոկիոյի ռազմական տրիբունալի կողմից մահվան դատապարտված և որպես պատերազմի հանցագործ ճանաչված պատերազմյան Ճապոնիայի վարչապետ, գեներալ Տոջո Հիդեկիին, և բանաստեղծ Կոբայասի Յոշիհիրոյի «Պատմվածքներ պատերազմի մասին» ստեղծագործությունը: Նշված բոլոր դեպքերում ճապոնական հասարակության ներսում ծավալվեց հանրային լայն բանավեճ՝ ուղղված անցյալի մեկնաբանությանն ու իմաստավորմանը:

Մեզանում ևս, հատկապես 2020թ. արցախյան պատերազմին հաջորդած հանրային-քաղաքական քննարկումներում պատմությունն ամեն ինչի առանցքում է, հոսում են պատմական անցյալի նորովի իմաստավորման իրարամերժ փորձերը, պատմության այս ու այն դրվագի ակցենտավորումը, հերոսների ու հակահերոսների փնտրտուքն ու փոխատեղումը օրվա անբաժան մասն են: Պատահական չէ, ու ինչպես ճապոնացիների պարագայում՝ թելադրված է նախևառաջ պարտությամբ պայմանավորված էթնիկ ինքնաճանաչման մղումով, որ մեր պատմությունը, նրա առանձին դրվագներն ու դերակատարներն արդեն շատ երկար ժամանակ դարձել են մեր հանրային-քաղաքական բանավեճն ամենավարարը ոռոգող առուն: Խորենացու պատմության, Պապ թագավորի, Էրատո թագուհու, Նժդեհի, մյուսների, նորագույն պատմության տարբեր դրվագների, ազգային-ազատագրական շարժման, Հայոց ցեղասպանության, հայ-թուրքական հարաբերությունների, Արցախյան շարժման, Անկախության հռչակագրի և այլնի մասին հիշատակումներն ու հրապարակումները լրահոսի ու հանրային քննարկումների մի առանձին մեծ մասն են դարձել:

Ինչպես վկայում է հետպատերազմյան Ճապոնիայի փորձը, պարտության արդյունքում էթնիկ ինքնության ճգնաժամ ապրող ժողովուրդներն անխուսափելիորեն հանգում են պատմական անցյալի վերաիմաստավորման հրամայականին: Անցյալի մեջ են փնտրում ոչ միայն դեռ երեկ տեղի ունեցածի բացատրությունը, այլ նաև փորձում նրա թողած դասերով մոդելավորել հնարավոր

ապագան: Միայն այդ ժողովրդի էլիտաների՝ այդ բանավեճը հրահրող, դրանք խրախուսող կամ դրանց մասնակից դերակատարների մտադրություններից ու որոշում կայացնողների նպատակներից է կախված, թե ինչ հունով կընթանա անցյալի անխուսափելի վերարժևորման այդ բնական պրոցեսը և ինչպիսի ազդեցություն այն կունենա անցյալի հիշողության բյուրեղացման, էթնիկ ինքնության տրանսֆորմացիայի գործում, ինչպիսին կդառնա անցյալի հիշողությունը:

ՊԱՏԵՐԱԶՄ VS ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Ժողովուրդների պատմության սրտում նրանց մղած պատերազմների հիշողությունն է: Ճապոնացիների պարագայում ևս: Այդ պատերազմները, տարած հաղթանակներն ու պարտությունները, դրանց հետևանքների հաղթահարումը կազմում են յուրաքանչյուր ժողովրդի պատմության կենտրոնական, իսկ երբեմն նաև պատմությունաստեղծ աղբյուրները: Ինչպե՞ս են բյուրեղանում կամ փոխակերպվում պատերազմի մասին հիշողությունները: Պետությունն ու էլիտաները դեր ունեն այդ գործում: Պատերազմների, հատկապես դաժան պարտությամբ ավարտված պատերազմների մասին հիշողությունն ինքնաբերաբար է ձևավորվում, թե՛ այն հնարավոր է ուղղորդել ու կառավարել: Ինչու՞ են պատերազմները, տարած հաղթանակներն ու պարտություններն այդքան մեծ նշանակություն ստանում էթնիկ ինքնության ու ժողովրդի հավաքական որակների կարծրացման, դրանց փոխակերպման գործում: Ինչու՞ են պատերազմները դառնում էթնիկ միասնականության գիտակցության ուժեղացման և կոնսոլիդացիայի կարևոր գործոն:

Երկրորդ համաշխարհային պատերազմում Ճապոնիայի կրած աննախադեպ պարտությունը առանցքային դերակատարություն ունեցավ ճապոնացիների հիշողության բյուրեղացման ու անցյալի գնահատման հարցում: Պարտությունը և պատերազմի ծանր հետևանքները՝ արտաքին նվաճումը, ճապոնացիների հավաքական գիտակցության մեջ բյուրեղացրին պատերազմին

Ճապոնիայի մասնակցության անիմաստությունը: Արտաքին ուժերի դեմ վերջնական պարտությունը, իրավիճակի անփոփոխելիությունը, սկիզբ առած թերարժեքության համախտանիշը ճապոնացիների ինքնությունը մղեցին նոր որոնումների ու հիշողության կառուցակարգման նոր բանաձևերի: Արտաքին նվաճման ու ապառազմականացման թելադրանքով վրեժխնդրության միակ հնարավոր եղանակը դարձավ երկրի վերակառուցումը, պատերազմի հետևանքների վերացումը և արդիականացումը:

Պատերազմում կրած ծանր պարտությունը, դրա հիշողությունը դարձավ երկրի արդիականացման և տնտեսաշինության մեջ էթնիկ մոբիլիզացիային և հավաքական նվիրումին նպաստած կարևոր գործոններից մեկը. ջախջախիչ պարտության հավաքական ընկալումն օգնեց ճապոնացիներին ուժեղացնելու երկիրը պատերազմի ավերակներից ազատելու նվիրումը և, ըստ էության, սկիզբ դրեց ժամանակի մեջ հեքիաթային թվացող «փյունիկի ֆենոմենին» կամ ճապոնական հրաշքին:

Պարտությամբ ավարտված պատերազմները կարող են ծնունդ տալ նաև ազգայնական նոր սենտիմենտների, երբ պատերազմի հիշողությունը, ազգի գաղափարը և հավաքական ինքնության այլ դրսևորումները վերածվում են խորհրդանիշերի, ինչը մարդկանց մղում է, ընդունելով և հիմնավորելով պարտված պատերազմում մեծ զոհողություններն ու կորուստները, պատրաստվելու ունանշի, ինչպես Գերմանիան առաջին աշխարհամարտից ու Ադրբեյջանն Արցախյան առաջին պատերազմից հետո: Նման պարագաներում հրապարակ են նետվում այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են «նրանք իզուր չեն զոհվել, նրանք զոհվել են հանուն հայրենիքի, իրենց կյանքը զոհաբերել են՝ ապահովելու մյուսներիս կյանքը»:

Նմանատիպ արտահայտությունները խորթ չէին հետպատերազմյան Ճապոնիայում ևս: Երկրի արդիականացմանը զուգահեռ նման հարցադրումները գնալով ակտիվացան, նպաստելով անցյալի վերաբերյալ լայնածավալ

քննարկումների, պատմության վերագնահատման ու վերաբժնորման՝ հիշողության բյուրեղացման:

Երկրորդ համաշխարհային պատերազմի՝ ճապոնացիների պատմական հիշողության վրա ունեցած շարունակական ազդեցության մասին են վկայում Ճապոնիայի պատմության այդ հատվածի վերագնահատման մինչև օրս չդադարող փորձերը: Թե ինչպես է ներկայացվում պատմության այդ հատվածը պատմության դասագրքերում, ամեն անգամ քննարկումների մեծ ալիք է բարձրացնում ոչ միայն ճապոնական միլիտարիզմից տուժված երկրներում, այլ նաև բուն ճապոնական հասարակության ներսում: Չնայած հարևան երկրների և միջազգային հանրության ուժգնացող ճնշումներին, ճապոնական էլիտան, երկրի վարչապետների և կառավարության այլ անդամների մակարդակով գրեթե ամեն տարի այցելում է Յասուկունիի հայտնի տաճարը՝ հարգանքի տուրք մատուցելու պատերազմում զոհված ճապոնացիների հիշատակին: Մինչդեռ Յասուկունիի սինտոյական տաճարը, որ գտնվում է Տոկիոյի կենտրոնում, «նվիրված է բոլոր այն մարդկանց հոգիներին, ովքեր պատերազմների ժամանակ զոհվել են հանուն ազգի»։ այդտեղ են ամփոփված նաև Երկրորդ աշխարհամարտին Ճապոնիայի մասնակցությունը սանձազերծած ռազմական շատ գործիչների, Տոկիոյի տրիբունալի կողմից պատերազմի հանցագործներ ճանաչված զինվորականների, այդ թվում՝ գեներալ Տոջո Հիդեկիի աճյունը: Պատերազմի՝ ճապոնացիների հիշողության վրա ունեցած մեծ ազդեցության մասին է վկայում նաև այն փաստը, որ հետպատերազմյան տնտեսական զարգացման շրջանը ճապոներենում անվանվում է ոչ թե անցումային, ինչպես ընդունված է տնտեսագիտության մեջ, այլ հետպատերազմյան կամ սենգո:

Անցյալի ու հատկապես պատերազմի՝ հաղթական թե տրավմատիկ հետք թողած ու պարտված, հիշողությունը կարող է դառնալ ինչպես միավորող, այնպես էլ պառակտիչ ուժեղ գործոն՝ ինչպես հասարակությունների ներսում, այնպես էլ այդ պատերազմները մղած ժողովուրդների հետ հարաբերություններում:

Որոշ դեպքերում, ինչպես հետպատերազմյան միավորվող Եվրոպայի պարագայում, կիրառելի է դառնում «մոռացություն երկխոսության միջոցով» մոդելը՝ միմյանց հետ երկխոսենք, որ միասին մոռանանք Երկրորդ համաշխարհայինի ժամանակ իրար դեմ պատերազմելը: Որոշ դեպքերում դոմինանտ է դառնում «հիշում ենք, որպեսզի երբեք չմոռանանք» մոդելը, ինչպես Հոլոքոստին հաջորդած շրջանում Իսրայել պետության պարագայում է: Հիշողության բյուրեղացման ևս մի քանի մոդելներ կան՝ «հիշում ենք, որ մոռանանք», երբ կողմերից մեկն առաջարկում է ընդունել տեղի ունեցածը, որպեսզի այն հետո մոռացության տրվի և այդ կերպ անցյալի ցավը մեղմվի: Կամ «հիշողություն երկխոսության միջոցով» մոդելը, երբ կողմերից մեկն առաջարկում է հավաքական հիշողության հիմքում դնել ոչ թե պատերազմի ցավն ու տեղի ունեցածը, այլ այդ համատեղ հիշողության դրական շերտերը, ինչպես Հայոց ցեղասպանության հարցում թուրքական պետության մոտեցումն է:

Հետպատերազմյան Ճապոնիայի պարագայում կիրարկված մոդելը, նաև ԱՄՆ-ի լրջագույն արտաքին ազդեցությամբ պայմանավորված, արտաքնապես հիշեցնում էր հիշողության հետպատերազմյան եվրոպական մոդելը: Ճապոնացիները ընդունեցին, որ միլիտարիզմը բացասական դեր է ունեցել իրենց երկրի ու ժողովրդի կյանքում, սևացրին ու դատապարտեցին այն, նվաճողականության թիրախ դարձած հարևան պետություններին առաջարկելով առաջ ընթանալ «մոռացություն երկխոսության միջոցով» մոդելով: Թեև ոչ այն չափով ու բառերով, ինչպես պահանջում էին նվաճողականության զոհ դարձած հարևան ժողովուրդները, ճապոնացիները ընդունեցին պատերազմում իրենց գործած հանցանքներն ու առաջարկեցին համատեղ ջանքերով մոռանալ այդ ամենն ու կենտրոնանալ ապագայի վրա: Երկրի արագ արդիականացմանն ու հարևան պետությունների՝ հատկապես Հարավային Կորեայի ու Չինաստանի արագ զարգացմանը զուգահեռ, իհարկե, այս մոդելը ներսից ու դրսից ենթարկվեց մեծ ու փոքր վերանայումների:

Ճապոնական հասարակության ներսում, սակայն պատերազմում կրած դաժան պարտության մասին հիշողությունը, ոչ առանց ճապոնական կառավարության ու մտավորական էլիտաների հետևողական ջանքերի, բյուրեղացվեց ու նպատակաուղղվեց երկրի արդիականացմամբ ու զարգացմամբ պատերազմի թողած տրավման հաղթահարելու բանաձևի սպասարկմանը: Նույնիսկ առօրյա կյանքում սենգոյի տարիներին նկատելի էր ճապոնացիների ջանասիրաբար նվիրումը երկրի հետպատերազմյան վերականգնմանը, ինչն իր մեջ որոշ առումով կրում էր ամենօրյա աշխատանքի տեսքով թշնամուց վրեժ լուծելու յուրօրինակ հավաքական մղում:

Արցախյան վերջին պատերազմի ու դաժան պարտության մասին հայ ժողովրդի հիշողությունը դեռ բյուրեղացման փուլում է: Պատերազմի ու աղետի հիշողությունը, ի տարբերություն ճապոնացիների, ոչ թե համախմբում է մեր հասարակությանը, այլ, ոչ առանց իշխանությունների նպատակային քարոզչության, վերածվել է հիշողության պառակտման հերթական գործոնի: Եթե հետպատերազմյան Ճապոնիայում հավաքական ինքնագիտակցությունը տեղի ունեցած աղետում մեղավոր կարգեց միլիտարիզմն ու նրա առաջնորդներին՝ տեղի ունեցավ Տոկիոյի ռազմական տրիբունալը և այլն, հայկական իրականությունում պարտության ու ազգային աղետի մեղավորների փնտրտուքը դեռ ընթացքի մեջ է: Հիշողության մոդելների նժարները դեռ ճոճվում են:

Մեկ բան ակնհայտ է, որ չնայած գործադրվող զուտ քարոզչական բնույթի ահռելի ջանքերին, ներհասարակական հարթությունում պատերազմի ու տեղի ունեցած աղետի շուրջ մեր հավաքական հիշողությունը մեզանում չի բյուրեղանում այնպես, որ երկրի արդիականացման ու զարգացման գաղափարները սնուցեն տեղի ունեցած աղետի վրեժխնդրությունը, ինչպես դա խելամտորեն ուղղորդվեց հետպատերազմյան Ճապոնիայում: Նույն կերպ, բայց արդեն արտաքին ճակատում՝ մեր աշխարհագրական միջավայրում, ընտրվել է մինչև օրս աշխարհին անհայտ, հիշողության կերտման հայտնի բոլոր մոդելներից տարբերվող մի տարբերակ՝ վերցնենք ու մոռանանք այն, ինչ եղել է ու անցնենք առաջ: Ավելորդ է

ասել, որ պարտության ու աղետի հիշողության կերտման նման մոդել գոյություն չունի: Եթե կարճաժամկետ հեռանկարում այն խորացնելու է հայ ժողովրդի մեջ ի հայտ եկած թերարժեքության ախտանիշը, ապա միջնաժամկետ ու երկարաժամկետ հեռանկարում անխուսափելիորեն այն հանգեցնելու է ռևանշիստական հիշողության բյուրեղացմանը:

ԹԵՐԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆ VS ԳԵՐԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆ

Թերարժեքության բարդույթը երկարատև պատմական ժամանակաշրջանում տեղի ունեցած գործընթացների արդյունք է: Այն բյուրեղանում է տվյալ հավաքականության շարունակական պարտությունների, անբարենպաստ պատմական պայմանների, անկախ պետականության բացակայության պայմաններում: Այստեղից հետևում է, որ նման բարդույթները հավաքական որակ են ստանում միմյայն երկարատև և շարունակական գործընթացների արդյունքում: Անհրաժեշտ է, սակայն, տարբերակում դնել թերարժեքության բարդույթի և թերարժեքության ախտանշանի միջև: Ճապոնացիների անվերապահ կապիտուլյացիան, դաշնակից ուժերի կողմից ժամանակավորապես նվաճված լինելը ճապոնացիներին վարակեցին թերարժեքության ախտանիշով:

Դա որևէ հավաքականության, խմբի կամ նույնիսկ անհատի կյանքում վերջիններիս անխափան կենսագործունեությունը և վերարտադրությունը խաթարող և ոչ կենսաբանական բնույթի առաջացած հանգամանք է, որն իր գոյապահականությունն ու վերարտադրությունը առաջնայնորեն պայմանավորում է իրենից դուրս առկա խմբերով և հանգամանքներով: Թերարժեքության ախտանշանի ամենամեծ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն կարող է գոյություն ունենալ միայն կարճ պատմական ժամանակահատվածում: Եթե երկարատև պրոցեսում այն չի վերածվում թերարժեքության բարդույթի, ապա անխուսափելիորեն գրեթե ամբողջությամբ անհետանում է: Ինչպես ճապոնացիների պարագայում եղավ: Երկրորդ համաշխարհային պատերազմից

հետո Ճապոնիայի գրական-գեղարվեստական շրջանակներում երբեմն անգամ ծայրահեղ թեզ էր հնչում, որ ճապոնացիները մեծապես կշահեին, եթե ժամանակին անգլերենը դարձրած լինեին իրենց պետական լեզու՝ կոկուգոն, ինչը կբացառեր պատերազմն ու ճապոնացիների կրած զրկանքները: Իհարկե, հետպատերազմյան Ճապոնիայի հանրային կյանքի ողջ համապատկերում նման ծայրահեղ տեսակետները բավական հազվադեպ էին, սակայն դրանք, ի հավելումս պատմության անբարենպաստ դասավորության, գալիս էին ապացուցելու, որ պատերազմում կրած պարտությամբ պայմանավորված, ճապոնացիների ինքնությունը վարակվեց թերարժեքության ախտանշանով: Պատերազմի հանցագործ ճանաչված պաշտոնաթող զինվորականներից մեկն անգամ հիշողություններում գրելու էր, որ եթե ինքը նորից ծնվեր, ապա կգերադասեր ծնվել որպես խեցգետին, այլ ոչ ճապոնացի:

Թերարժեքության ախտանիշը ճապոնացիների պարագայում, այդուհանդերձ, չվերածվեց թերարժեքության բարդույթի: Դա պայմանավորված էր երկու մայր գործոնով: Անշուշտ, առաջին կարևոր հանգամանքը դա պատերազմի հետևանքների վերացումը և հասարակական գիտակցությունից դրա դուրսմղումն էր, մրցունակ, տնտեսապես զարգացած միավորի վերածվելը և արդեն 1970-ականների տարածաշրջանային առաջատարի դերի ստանձնումը: Մյուս կարևոր գործոնը էթնիկ ինքնաճանաչման, ճապոնական մշակույթի և ընդհանրապես ճապոնականության լայնածավալ գիտական ուսումնասիրությունների և հասարակական քննարկումների մեծ ալիքն էր, երբ հասարակության գրեթե բոլոր կառույցներն ու ինստիտուտները, շերտերը, այս կամ այն կերպ, ներքաշվում էին նման քննարկումների մեջ: Ուսանելին այն է, որ էթնիկ ինքնության այս փոխակերպումների ընթացքը ժամանակի ճապոնական կառավարությունները համարում էին չափազանց կարևոր խնդիր, տարբեր որոշումներով ու քարոզչությամբ ուղղորդելով այն, ինչը մեծ հաշվով կառավարման բարձրագույն խմբի օրակարգն է:

Մեկ հետաքրքիր օրինակ: Ճապոնիայի հետպատերազմյան տնտեսական առաջընթացն առանձնանում էր նաև նոր տեխնոլոգիաների մշակմամբ և դրանց մատչելիության աճով: Այսպես, սկսած դեռևս 1970-ականների վերջերից, ճապոնացիները սկսեցին զանգվածային սպառման համար արտադրել ավտոմատ նկարող լուսանկարչական սարքավորումներ, որոնք ճապոներենում ստացան «բակաչոն-կամերա» անվանումը: Բակա նշանակում է հիմար, իսկ չոն՝ կորեացիներին տրվող վիրավորական արտահայտություն է: Այսպիսով, «բակաչոն-կամերա» նշանակում էր լուսանկարչական սարք, որը կարող էին օգտագործել նույնիսկ հիմարները և կորեացիները:

Ինչպես այս և հազարավոր այլ օրինակներն են հուշում, պարտությամբ պայմանավորված թերարժեքության ախտանիշին երբեմն կարող է փոխարինելու գալ հակառակ ծայրահեղությունը՝ գերարժեքության ախտանիշը: Ճապոնական հրաշքին, Ճապոնիայի առաջատար դերին և տարածաշրջանային ակտիվացած ինտեգրացիային զուգահեռ, ճապոնացիների մեջ հենց նման, որոշ առումով՝ քողարկվող, գերարժեքության ախտանիշ մեջտեղ եկավ՝ թարմացնելով ու սնուցելով ազգային բացառիկության մասին ճապոնական պատկերացումները:

ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀ VS ԶԱՐԳԱՑՈՒՄ

Պատերազմում կրած պարտությունը, ազգային աղետը, դրանից ածանցվող թերարժեքության ախտանիշն անխուսափելի են դարձնում նաև արտաքին աշխարհի մասին ժողովուրդների հավաքական ընկալումների տեղաշարժերը: Այդ ամենի ուղղակի դասագրքային օրինակ էր այն զիզգազածն ընթացքը, որն արձանագրեց ճապոնացիների էթնիկ ինքնությունը:

Ինչպես պատերազմում կրած ծանր պարտության ու ԱՄՆ-ի կողմից ատոմային ռմբակոծության ենթարկվելու հետևանքով ճապոնացիների հավաքական ինքնագիտակցության մեջ թափանցեց արևմտյան մշակույթի ու արժեքային համակարգի գերադաս և ճապոնականի՝ ստորադաս լինելու մասին պատկերացումները, այդպես էլ ճապոնական հրաշքի արդյունքում նկատելի

դարձան էական փոխակերպումներ. արդեն ճապոնական մշակույթը, հարևան ասիական տարբեր մշակույթների հետ համեմատության մեջ, սկսեց դիտարկվել իբրև գերադաս: Միևնույն ժամանակ, ասիական որոշ երկրների աննախադեպ զարգացմամբ, ինչպես նաև ճապոնական հասարակության ներսում սերնդափոխությամբ պայմանավորված, ճապոնացիների արևմտականացման ու ապաստիականացման, վերաասիականացման ալիքները շարունակաբար փոխարինեցին միմյանց:

Ավանդականի ու արևմտյանի միջև ծանրության սլաքը ճապոնացիների մոտ հետպատերազմյան տարբեր ժամանակաշրջաններում ճոճվել է տարբեր ուղղություններով՝ կախված արտաքին աշխարհի հետ տեղեկատվական հոսքերի և ցանցերի աշխուժացման կամ թուլացման գործընթացներով՝ երեք շրջափուլով:

Առաջինը դա հետպատերազմյան շրջանն է, երբ ծանրության սլաքը միանշանակ թեքված էր արևմտյան մշակութային հարթություն: Երկրորդ աշխարհամարտին հաջորդած առաջին շրջանում ճապոնական ավանդական մշակույթը ընկալվում էր հետամնաց, արխայիկ և ավատատիրական տարրեր պարունակող: Տիրապետող ու բնութագրական էր «դացուա նյու»՝ փախչել Ասիայից դեպի Արևմուտք կարգախոսը:

Այս շրջափուլն ավարտվեց 1960-ականների վերջին, երբ Ճապոնիայի տնտեսական և քաղաքական արդիականացման հաջողություններով և էթնիկ ինքնաճանաչման մեծ ալիքով պայմանավորված՝ այդ հակաթեզի ծանրության սլաքը սկսեց հավասարակշռվել: Երկրորդ շրջափուլը, որն ընդգրկում է 1970-ականների վերջերից մինչև 1990-ականների սկիզբը, կարելի է բնութագրել հավասարակշռված փոխազդեցության ժամանակաշրջան: Այս շրջափուլին բնորոշ էր տարածված «ուսկոն յոսայի»՝ ճապոնական ոգի և արևմտյան տեխնոլոգիաներ և սեյտայի (քաղաքական համակարգ) և կոկուտայի (էթնիկ համակարգ) անբաժանելիության կարգախոսն ու տեսությունը: Այս շրջափուլում ճապոնացիների հավաքական ընկալումներում սկսեց գերիշխող դառնալ էթնոպերիֆերիզմը, ի հակադրություն էթնոցենտրիզմի, ինչում արևմտյան

երկրներում հաճախ մեղադրում էին ճապոնացիներին: Ճապոնացիների էթնիկ կենսատարածքը սկսեց ընկալվել որպես սահմանային, հարևան և ոչ հարևան քաղաքակրթությունների շփման միջավայրում գտնվող, կամրջի ու միջնորդի առաքելություն ունեցող միջավայր: Միևնույն ժամանակ, Ճապոնիայի ընթացող արդիականացումը սկսեց պայմանավորվել ոչ միայն արտաքին միջամտությամբ ու թելադրանքով, ինչպես նախկինում, այլ նաև ներքին՝ էթնիկ առանձնահատկություններով:

1990-ականների սկզբներից, արդեն Ճապոնիայի «կոկուսայկա»-ով կամ միջազգայնացմամբ, գլոբալացման գործընթացների խորացմամբ ու հետսառըպատերազմյան աշխարհակարգում Ճապոնիայի նոր դերակատարությամբ, իսկ վերջին տասնամյակներում նաև համաշխարհային ինֆորմացիոն հեղափոխությամբ պայմանավորված, նկարագրված հակաթեզի ծանրության սլաքը սկսեց կրկին թեքվել դեպի արևմտյան, գլոբալ մշակույթ: Վերջին երեք-չորս տասնամյակների ընթացքում Ճապոնիայում և նրա սահմաններից դուրս կանխորոշվում է Ճապոնիայի անխուսափելի արևմտականացումը՝ հիմնվելով այն թեզի վրա, որ ճապոնացի ժամանակակից երիտասարդությունն այլևս անդառնալիորեն արևմտյան արժեհամակարգի կրող է, բավականին հեռացել է իր էթնիկ և մշակութային արմատներից:

Համանման խորքային փոխակերպումներ են տեղի ունենում նաև հայաստանյան իրականությունում. փոխակերպվում է ոչ միայն աշխարհագրական անմիջական հարևանության, այլ նաև արտաքին աշխարհի մասին հայ ժողովրդի հավաքական ընկալումները: Այն անխուսափելի հետևանքն է պատերազմում հայ ժողովրդի կրած դաժան պարտության և էթնիկ ինքնության մեծ ճգնաժամի: Ադրբեյջանի ու Թուրքիայի հետ մեր հարաբերությունները վերանայելու, Ռուսաստանի հետ ավանդական բարեկամությունն իմաստավորելու, արևմտյան ուղղությամբ առաջ ընթանալու, արտաքին աշխարհի մասին մեր կարծրատիպային պատկերացումները քանդելու, աշխարհի հետ մեր հարաբերությունների պատմությունը նորովի գնահատելու, հայրենասիրության կայսերական ու

տեղական մոդելների և համանման օրակարգերի շուրջ քննարկումներն այսօր
զանգվածայնորեն սպառվում են հասարակության բոլոր շերտերի կողմից:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: